# Մանրամասներ, որոնք դուք պետք է իմանաք ուսումնասիրությունից առաջ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

| Հատվածներ՝ ուսումնասիրման համար | Մանրամասներ, որոնք դուք պետք է իմանաք այս հատվածներն ուսումնասիրելուց առաջ |
|---|---|
| Գործք Առաքելոց 1.23–26 | Առաքյալները և Քրիստոսի այլ հետևորդներ հավաքվել էին՝ քննարկելու, թե ով կփոխարինի Հուդային՝ որպես Տասներկու Առաքյալներից մեկը: |
| Գործք Առաքելոց 2.37-43 | Երբ Քրիստոսի Համբարձումից հետո առաքյալները հավաքվեցին Երուսաղեմում, Սուրբ Հոգին զորեղ կերպով «նստեց նորանց ամեն մէկի վերայ» (տես Գործք Առաքելոց 2.1-8): Սուրբ հոգով լցված՝ Պետրոսը վկայեց Հիսուս Քրիստոսի մասին (Գործք Առաքելոց 2.14-36): Այս հատվածը նկարագրում է այն ազդեցությունը, որ այս հոգևոր զեղումն ունեցավ վկաների վրա: |
| Գործք Առաքելոց 3.1-8, 4.8-10 | Երուսաղեմի տաճարում Պետրոսն ու Հովհաննեսը մի հաշմանդամ մարդու հանդիպեցին: |
| Գործք Առաքելոց 5.12-16 | Դրանից առաջ հրեա ղեկավարները զգուշացրել էին առաքյալներին, որ նրանք այլևս չխոսեն Հիսուս Քրիստոսի մասին (Գործք Առաքելոց 4.13-18): |
| Գործք Առաքելոց 5.17-25 | Պետրոսը և Հովհաննեսը բանտ նետվեցին, երբ շարունակեցին վկայել Հիսուս Քրիստոսի մասին և Նրա անունով հրաշքներ գործել: |

- Ի՞նչ եք սովորել Հիսուս Քրիստոսի մասին այս հատվածներից, որն ազդում է Նրա հանդեպ ձեր հավատքի և վստահության վրա:
- Այս իրադարձություններն ինչպե՞ս են ցուցադրում այն փաստը, որ Փրկիչը ղեկավարում էր Իր Եկեղեցին Իր առաքյալների միջոցով:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Details You Need to Know before Study*-ի թարգմանությունը: Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.